ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ,
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ,
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ, ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ավագանու հարգելի՛ անդամներ,

ի պատասխան Ձեր 06.02.2024թ. հ. 6-2024 գրության՝ տեղեկացվում է.

Նուբարաշենի 2-րդ փողոցի մի խումբ բնակիչների կողմից բարձրացված՝ նշված փողոցի տրանսպորտային սպասարկման հարցը քննարկվել է «Երևանի ավտոբուս» և «Երևանտրանս» ՓԲԸ-ների հետ: Նուբարաշենի 2-րդ փողոցի տրանսպորտային սպասարկման նպատակով նոր երթուղի կազմակերպելու կամ գործող երթուղիներից մեկի ուղեգիծը մինչև նշված փողոց երկարացնելու հնարավորությունը ներկա պահին չկա:

Բարձրացված հարցի կարգավորման հնարավոր տարբերակները կդիտարկվի՝ առաջիկայում մայրաքաղաք ավտոբուսների նոր խմբաքանակի (171 հատ) ներկրման պարագայում, Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր համատեքստում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ